

ՍԱՂՄՈՍ 28

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Օգնության աղոթք, և փառաբանություն պատասխանի համար	Պատասխանված աղոթքով ցնծություն	Անձնական թշնամիներից ազատության աղոթք (Ողբ)	Օգնության աղոթք	Աղաչանք և գոհություն
<u>MT նախաբան</u> Դավթի սաղմոս				
28:1-5	28:1-2	28:1-2	28:1-3	28:1 28:2
	28:3-5	28:3-5	28:4-5	28:3 28:4 28:5
28:6-9	28:6-7	28:6-7	28:6-7	28:6 28:7
	28:8-9	28:8-9	28:8-9	28:8-9

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՅԻՎԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԵՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<p>NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 28:1-5 ¹Քեզ եմ կանչում, ո՛վ ՏԵՐ, Իմ Վեմ, իմ հանդեպ լուռ մի՛ մնա: Զլինի թե լռելուդ հետևանքով գուրն իջնողներին նմանվեմ: ²Լսի՛ր իմ աղերսանքի ձայնը, երբ Քեզ եմ կանչում,</p>

Երբ բարձրացնում եմ ձեռքերս դեպի Քո սուրբ խորանը:

³Ինձ կորստյան մի՛ մատնիք ամբարիշտների հետ

Ու անօրենություն գործողների հետ,

Որոնք իրենց դրացու հետ խաղաղություն են խոսում,

Բայց սրտերում չարություն կա:

⁴Հատուցի՛ր նրանց իրենց արարքների համեմատ

Ու իրենց կատարած չարության համեմատ,

Իրենց ձեռքերի գործերի համաձայն տո՛ւր նրանց .

Արժանի՛ն հատուցիր նրանց:

⁵Որովհետև նրանք ուշադրություն չդարձրին Տիրոջ արածներին,

Ո՛չ էլ Նրա ձեռքերի գործերին, Նա կործանելու է նրանց

Ու էլ չի վերականգնելու:

28:1-5 Որոշակի անհամաձայնություն կա այն հարցում, թե ինչպես բաժանել այս Սաղմոսի պարբերությունները (տես այս գլխի առաջին էջը): NASB տալիս է Սաղմ. 28:1-5, 6-9, ուստի ես էլ այդպես կկիրառեմ: Առաջին պարբերությունը որք է, իսկ երկրորդը՝ գոհության սաղմոս:

Սաղմոսերգուն աղոթում է՝

1. Որ ՅԱՀՎԵՆ լսի իրեն, երբ կանչում է

2. Որ ՅԱՀՎԵՆ չկործանի իրեն ինչպես ամբարիշտներին

Սաղմ. 28:4-ում նա կիրառում է երեք ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ՝ նկարագրելու, թե ինչ է անելու ՏԵՐԸ ամբարշտին:

1. հատուցի՛ր նրանց (BDB 678, KB 733, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) իրենց արարքների համաձայն (տես՝ Հոր 34:11, Սաղմ. 62:12, Առակ. 24:12, Ժող. 12:14, Երեմ. 17:10, 32:19, Մատթ. 16:27, 25:31-46, Հռոմ. 2:6, 14:12, 1 Կորնթ. 3:8, 2 Կորնթ. 5:10, Գաղ. 6:7-10, 2 Տիմ. 4:14, 1 Պետ. 1:17, Հայտն. 2:23, 20:12, 22:12):

2. հատուցի՛ր նրանց իրենց չար գործերի համեմատ (ԲԱՅԸ ենթադրվում է #1-ից)

3. հատուցի՛ր նրանց (միևնույն ԲԱՅԸ ինչպես #1-ում) իրենց գործողությունների համեմատ (բառացի՝ «իրենց ձեռքերի գործի համեմատ»)

4. արժանին հատուցի՛ր նրանց (BDB 996, KB 1427, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) (բառացի՝ «գործերը», BDB 168):

28:1 «Իմ վեմ» Այս տեսարանը խոսում է մշտագոյության, ուժի, կայունության, պաշտպանության մասին (տես՝ ամբողջական գրառումը Սաղմ. 18:2-ում):

❖ «մի՛ . . .» Սրանք երկու ԱՆԿԱՏԱՐՆԵՐ են՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով:

1. Սաղմ. 28:1 – համր /լուռ/ մի՛ մնա, BDB 361 II, տես՝ Սաղմ. 35:22, 39:12, 83:1, 109:1 (զուգահեռ է «լուռ» BDB 364 բառին):

2. Սաղմ. 28:3 – կորստյան մի՛ մատնիք, BDB 604 (այսինքն՝ հավանաբար կենդանու կամ պատերազմում գերի ընկածի պես):

❖ «գուրը» Այս տերմինը (BDB 92, տես՝ Սաղմ. 88:4, 143:7, Առակ. 28:17) հոմանիշ է *Sheol* (Շեոլ) բառին: Տե՛ս ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՈՐՏԵՂ ԵՆ ՄԵՌԵԼՆԵՐԸ: Հավանաբար դա կապ ունի՝

1. փորված գերեզմանի հետ (տես՝ Ես. 14:9, Եզեկ. 32:25)

2. Ժայռափոր գերեզմանի հետ

3. մի անցքի հետ, որը տանում է դեպի *Շեոլ* (տես՝ Սաղմ. 30:3, Առակ. 1:12, Ես. 14:15, 38:18, Եզեկ. 26:20):

28:2 «Երբ բարձրացնում եմ ձեռքերս դեպի Քո սուրբ խորանը» Այս ժեստն ունի մի քանի նշանակություն՝

1. գոհաբերությունից հետո քահանայի կողմից օրհնության գործառույթ՝ Ղևտ. 9:22 (այսինքն՝ որոշ գոհեր բարձրացվում էին դեպի ՅԱՀՎԵՆ)
2. խունկը որպես գոհ մատուցելուց հետո երկրպագուի կողմից կատարած գործողություն՝ Սաղմ. 141:2
3. սրբարանն ակնարկող ժեստ՝ Սաղմ. 134:2
4. աղոթքի դիրք՝ ձեռքերը բարձրացրած, տես՝ Ելից 9:29 (Մովսեսը), 3 Թագ. 8:22 (Սողոմոնը), Ողբ 2:19, 3:4 (Իսրայելը), Ղուկաս 24:50 (Հիսուսը), 1 Տիմ. 2:8 (հավատացյալները):
5. փառաբանության, երկրպագության և հանրային դավանության դիրք՝ Սաղմ. 63:4
6. ՅԱՀՎԵՒ գորությունը ցույց տալու մի կերպ, երբ Իր գավազանը բարձրացվեց Մովսեսի ձեռքերով (տես՝ Ելից 17:8-12):

Այս այն խորհրդապատկերում է մաքուր կյանքը (տես՝ 1 Տիմ. 2:8), բաց Աստծո համար և մի կյանքի, որը ընդունում է իր կարիքը Աստծուց ընդունելու՝ ստանալու (տես՝ բացասական կիրառությունը Սաղմ. 44:20-ում):

❖	
NASB	«դեպի Քո սուրբ խորանը»
NASB լուսանցք,	
NKJV ծանոթագրություն	«ներքին սենյակը»
NJB	«Սրբության Սրբոցը»
JPSOA	«ներքին սրբարանը»
LXX	«սրահը»
REB	«սրբարանը»

Այս երբայերեն տերմինը (BDB 184 I) հիմնականում նշանակում է «ետին մասը», «ներսը»: 3 Թագավորաց 6:16,19,20,21,22,23,31, 7:49, 8:6,8 համարները նկատի ունեն Սրբության Սրբոցը (տես՝ Ելից 26:31-35), որտեղ ուխտի տապանակը դրված էր Սողոմոնի հսկայական *քերովբեների* միջև:

Հավատարիմ հետևորդները Հին Ուխտում դեմքով կանգնում էին դեպի տաճարը (տես՝ 3 Թագավորաց՝ Սողոմոնի հրաշալի աղոթքը Տաճարի սրբագործման օրը), երբ նրանք աղոթում էին, քանի որ հենց այդտեղ էր բնակվում ՅԱՀՎԵՆ՝ *քերովբեների թևերի* միջև: Այդտեղ էին հանդիպում երկինքն ու երկիրը: Ուխտի տապանակը ՅԱՀՎԵՒ գահի պատվանդանն էր:

Սակայն Նոր Ուխտում Աստված ներկա է ամեն տեղ (տես՝ Հովհ. 4:20-24): Նոր տաճարը Հիսուսն է (տես՝ Հովհ. 2:19,21):

28:3,5 «Քանի որ...» 3 և 5 համարները թվարկում են ամբարիշտների գործերն ու վերաբերմունքը (այսինքն՝ գործնական աթեիստներ):

1. անօրենություն գործողներ՝ Սաղմ. 28:3
2. որոնք խաղաղությամբ են խոսում իրենց հարևանի հետ, բայց իրենց սրտերում չարություն կա (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻՐՏԸ)
3. որոնք Աստծո արածներին ուշադրություն չեն դարձնում՝ Սաղմ. 28:5 (Աստծո ժողովուրդը պետք է «ուշադրություն դարձնի», թե ով է Նա ըստ Նրա արածների, տես՝ 2 Օրինաց 32:7, Սաղմ. 107:43, Ովս. 14:9):
4. ովքեր Աստծո գործերին ուշադրություն չեն դարձնում (զուգահեռ), Սաղմ. 28:5, տես՝ Ես. 5:12

28:5 Սաղմ. 28:5-ի վերջին տողը պատմում է, թե Աստված ինչ է անելու նրանց (համեմատե՛ք Երեմ. 1:10-ի հետ):

1. նրանց կործանելու է – BDB 248, KB 256, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, Սաղմ. 28:5
2. ու էլ չի վերականգնելու – BDB 124, KB 139, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, ժխտական, Սաղմ. 28:5

Սաղմ. 28:5-ի երեք ԱՆԿԱՏԱՐԱՆԵՐԸ մատնացույց են անում ամբարիշտների շարունակական գործողությունները: Նրանց կյանքերը բնութագրվում են Աստծուն արհամարհելով և ուրիշներին

վիրավորելով, հետևաբար Աստծո դատաստանները նույնպես շարունակվում են (այսինքն՝ հավիտենական կործանում, տես՝ Ես. 6:9-10, Երեմ. 1:10):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 28:6-9

6Օրհնյալ լինի ՏԵՐԸ, որ լսեց իմ աղերսանքի ձայնը:

7ՏԵՐԸ իմ գործությունն ու վահանն է. իմ սիրտը Նրան հուսաց,

Ու ես օգնություն գտա: Ուստի սիրտս մեծապես հրճվում է,

Եվ իմ երգով ես Նրան եմ փառաբանելու:

8ՏԵՐԸ նրանց ուժն է,

Նա Իր օծյալի փրկարար գործությունն է:

9Փրկի՛ր Քո ժողովրդին ու օրհնի՛ր Քո ժառանգությունը.

Նաև հովվի՛ր նրանց ու հավիտյան բարձրացրո՛ւ:

28:6-9 Արմատական տրամադրության փոփոխություն է տեղի ունենում համար 6-ում: Այս պարբերությունը տալիս է այն պատճառները, թե ինչու պետք է ՅԱՀՎԵՆ օրհնվի (Սաղմ. 28:6ա):

1. Նա լսեց նրա աղոթքը
2. Նա նրա գործությունն ու վահանն է
3. Նա նրա ապաստարանն է

Համարներ 8 և 9-ում կենտրոնացումը փոխվում է Թագավորից (այսինքն՝ «Նրա օծյալից») դեպի Նրա ուխտի ժողովուրդը: Ինչպես որ ՅԱՀՎԵՆ փրկեց Թագավորին, այժմ էլ թող փրկի Իր ժողովրդին: Այս սահունությունը ԵՉԱԿԻ և ՀՈԳՆԱԿԻ թվերի միջև ընդունված է Սաղմոսներում:

❖ **«Օրհնյալ լինի ՏԵՐԸ»** Սա Սաղմոսներում պարբերաբար կրկնվող թեմա է: Նա օրհնվում է Իր հավատարիմ հետևորդների կողմից շատ տարբեր պատճառներով, սակայն դրանք բոլորն էլ վերադառնում են այն փաստին, թե ով է Նա և թե ինչեր է արել: Այս արտահայտությունը դարձել է պատարագային բանաձև (տես՝ Սաղմ. 18:46, 28:6, 31:21, 41:13, 66:20, 68:35, 72:18, 89:52, 106:48, 119:12, 124:6, 135:21, 144:1): Թող ամեն բան, որ շունչ ունի, փառաբանի Տիրոջը:

28:7 Ինչպես որ Սաղմ. 28:3 և 5 նկարագրում է ամբարշտին, Սաղմ. 28:7 նկարագրում է հավատարիմ հետևորդին:

1. նրա սիրտը Նրան է ապավինում՝ վստահում – BDB 105, KB 1200, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 112:7 (նկատել՝ մարդու վստահության և աստվածային ազատագրման՝ փրկության միջև աստվածաբանական կապը, տես՝ Սաղմ. 22:4-5, 25:1-3, 28:7, 31:14-15, 86:2, տես՝ NIDOTTE հատոր 1, էջ՝ 646-ի գրառումը):
2. նրան Աստված է օգնում – BDB 740, KB 810, *Qal* ԱՆԿԱՏԱՐ *վալ* –ով
3. նրա սիրտը հրճվում է – BDB 759, KB 831, *Qal* ԱՆԿԱՏԱՐ *վալ* –ով
4. նա գոհանում է Նրանից երգով – BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ (շարունակական փառաբանություն)

Պարզապես մի համառոտ մեկնաբանություն MT համարները հակադրված LXX: Հավանաբար այս երկուսի ետևում էլ եղել է մեկ այլ ավելի հին եբրայական տեքստ: MSS DSS-ը հետևում են MT-ին, իսկ մյուսները հետևում են LXX-ին: Վաղ եկեղեցին գրեթե բացառապես օգտագործում էր LXX: Սաղմ. 28:7-ը լավ օրինակ է նրանց մեկ այլ եբրայական տեքստից օգտվելու: LXX-ը տալիս է (տես՝ էջ՝ 173, AB-ում գրառումը՝

«ՏԵՐԸ իմ օգնականն է և իմ պաշտպանը, Նրան է իմ սիրտը հուսացել
Եվ Նա ինձ օգնեց ու իմ մարմինը վերականգնեց, և ես նրան հոժարակամ կճանաչեմ»:

28:8 «նրանց» UBS տեքստային նախագիծը (էջ՝ 208) տալիս է «Նրա ժողովրդին» որպես “C” գնահատական (այսինքն՝ որոշակիորեն կասկածելի):

1. նրանց - ܡܠ (NKJV, JPSOA)
2. Իր ժողովրդին – ܡܥܠ (NRSV, TEV, NJB, REB)

Մեպտուազինտան կիրառում է երկրորդ կետը, ինչպես և որոշ եբրայական ձեռագրեր: Ըստ երևույթին եբրայերեն մի տառ դուրս է մնացել MT տարբերակից:

❖ **«Իր օծյալի»** Տես նմանօրինակ կիրառություն Սաղմ.18:50-ում: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵՍԻԱ:

28:9 Այստեղ առկա է ՅԱՀՎԵԻՆ ուղղված աղոթքի մեջ մի շարք ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ, որով աղաչում է Նրան գործելու ուխտի ժողովրդի կողմից՝

1. փրկիր – BDB 446, KB 448, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ.106:47, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀԿ):
2. օրհնիր – BDB 138, KB 159, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՕՐՀՆՎԱԾ (ՀԿ)
3. հովվիր – BDB 944, KB 1258, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (NASB Սերտոդության Աստվածաշունչ/Էջ՝ 765/ մեկնում է, որ «հովվել» բառը կապ ունի Սաղմոս 23-ի հետ և հավանաբար նշում է Սաղմոս 23-28 որպես սաղմոսների հավաքածու, որոնք մի քանի ընդհանուր թեմաներով կապված են իրար):
4. բարձրացրու /տար/ (այսինքն՝ «վեր բարձրացրու»), *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Ես. 40:11, 63:9

Մի քանի Սաղմոսներ ավարտվում են հավաքական շեշտադրումով (այսինքն՝ Սաղմ. 3:8, 14:7, 25:22, 29:11, 51:18-19, 130:8):

❖ **«Քո ժառանգությունը»** ՅԱՀՎԵՆ հողային հատկացումներ էր կատարել բոլոր ազգերի համար (տես՝ 2 Օրինաց 32:9), սակայն Աբրահամի սերունդները Նրա հատուկ ժողովուրդն էին (տես՝ Ելից 19:5-6, 3 Թագ. 8:51, Սաղմ. 33:12): Նա սա ցույց տվեց Եգիպտոսից Իր խոստացված ելքով (տես՝ Ծննդ. 15:12-21): Նա ցույց տվեց Իր գործությունն ու սերը (տես՝ 2 Օր. 9:29): Մովսեսը խնդրեց ՅԱՀՎԵՆ չդատել Իր մեղավոր ժողովրդին, քանի որ հեթանոս ազգերը չէին հասկանա (տես՝ 2 Օր. 9:26-29): Իր ժողովրդի նպատակն էր հայտնել Նրա բնավորությունը բոլոր ազգերին (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ): Սակայն, եթե նրանք շարունակեին մնալ մեղքի և կռապաշտության մեջ, նրանք կմերժվեին (տես՝ Սաղմ. 106:40, Եզեկ. 36:22-23):

❖ **«հավիտյան»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ ('OLAM)

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտոդության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս է դիտարկում ՀԿ-ը մահը:
2. Արդյո՞ք Սաղմ. 28:4-ի ճշմարտությունը նույնն է ինչ Գաղ. 6:7-ինը:
3. Արդյո՞ք Սաղմ. 28:5գ կապված է Ես. 6:9-10 կամ Երեմ. 1:10-ի հետ:
4. Ինչո՞ւ այն սաղմոսները, որոնք արտացոլում են անհատի մտքերը և վիճակը, ավարտվում են հավաքական ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ: